

**Հայաստանի Հանրապետության գործում Սփյուռքի փոքրաքանակ Համայնքների
հնարավորությունների օգտագործման միջոցները:**

Օգտվելով առիթից կուզենայի հրավերքի համար խորհին շնորհակալություն հայտնել սփյուռքի նախարարությանը:

Գտնում եմ, որ այս համագումարը՝ լինելով Հայաստան-Սփյուռք համագործակցության կարևորագույն հարթակ, հնարավորություն է ընձեռում քննարկելու ոչ միայն Հայրենիքի և Սփյուռքի միջև առկա հարցերը, այլ նաև Սփյուռքի համայնքների միջև համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող խնդիրները:

Նման խնդիրներից է՝ համայնքային կառույցների համագործակցության բացակայությունը:

Քաղաքական հայացքների տարբերությունը և քաղաքական իրադարձությունների նկատմամբ տարբեր մոտեցումները թույլ չեն տալիս համայնքներին մեկ ընդհանուր կառույցով հանդես գալու կամ համախմբվելու:

Յուրաքանչյուր համայնքային կառույց փորձում է առկա խնդիրները ինքնուրույն լուծել, մասնավորապես դա հաջողվում է արդեն կայացած խոշոր համայնքային կառույցներին, փոքրաթիվ համայնքները ավելի մեծ դժվարությամբ կամ բոլորովին չեն կարողանում այն լուծել: Այդ իսկ պատճառով մեծամասնությունը չի մասնակցում համահայկական նախաձեռնությունների շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կան ոլորտներ, որոնց նկատմամբ այլախոհություն չկա՝ դա արվեստն է, գրականությունը, հայ մշակույթի բոլոր ճյուղերը: Այս շրջանակներում համագործակցությունը առավել իրատեսական է: Այստեղ փոքրաքանակ համայնքային կառույցները կարող են շատ հարցերի լուծման առաջատարը լինել: Քանզի համայնքային փոքրաթիվ կառույցները տեղերում ունեն լայն հնարավորություններ քաղաքային և մարզային կառույցների աջակցության տեսքով, մասնավորապես՝ անվճար դահլիճների, բեմերի, ցուցահանդեսային տարածքների, անհրաժեշտ սարքավորումների և դրանց սպասարկող անձնակազմի տրամադրման կամ միջոցառումների մասնակի ֆինանսավորման: դրանք բավական չեն ինքնուրույն խոշոր միջոցառումներ կազմակերպելու կամ համահայկական ծրագրերին մասնակցելու համար, այդ իսկ պատճառով այդ հնարավորությունների հիմնական մասը չի օգտագործվում:

Հետևաբար, ուժերի և հնարավորությունների համախմբման գործում հիմնական միջոց կարող է լինել ինտերակտիվ կայք էջի ստեղծումը, որտեղ իչպես ՀՀ Մշակույթի և Սփյուռքի նախարարությունները այնպես էլ Հայաստանի և սփյուռքի մշակութային

տարբեր ոլորտների կառույցները և անհատները հնարավորություն ունեն տեղադրելու իրենց նախագծերն ու ծրագրերը, որպես հայտ: Կայք էջում գրանցված սփյուռքի կառույցները և անհատ անձինք կարող են ընտրել և ընդունել այն հայտերը, որոնք կարող են կազմակերպել կամ որոնց կարող են աջակցել:

Նման կայք էջը համահայկական տարածում ստանալու դեպքում միաժամանակ լուծում է մի քանի խնդիր:

Մասնավորապես՝

1. Այն ունի հզոր տեղեկատվական բազա դառնալու պոտենցիալ;
2. Այն թույլ է տալու տարբեր կառույցներին համախմբվել կոնկրետ ծրագրի իրականացման շուջ;
3. Հնարավորություն է ընձեռում փոքրաքնակ համայնքային կառույցներին, միասնական օգտագործելով իրենց հանրավորություններն ու միջոցները, կազմակերպել խոշոր միջոցառումներ;
4. Զգալիորեն ավելանալու են ֆինանսական ներդրումները մշակույթի ոլորտում;
5. Այն դառնալու է երիտասարդ արվեստագետների հայտնաբերման, հետաքրքիր գաղափարների և ծրագրերի իրագործման հզոր հարթակ;
6. Հնարավորություն է տալու Սփյուռքում և Հայաստանում բնակվող մշակույթի և կրթության ոլորտի մասնագետներին հայտնելու իրենց մասին և մասնակից լինելու նախատեսվող միջոցառումներին, փաստացի հայտնաբերվելու և գնահատվելու է մշակույթի և կրթության ոլորտում տարածաշրջանային և համահայկական պոտենցիալը;
7. Սփյուռքում հայ մշակույթը կներկայացվի առավել պրոֆեսիոնալ մակարդակով:

Կարևորում եմ, որ կայք էջը աշխատելու է սոցիալական ցանցի մեխանիզմով և տեղեկատվական բազան համալրվում է Հայտի և հայտն ընդունելուց գրանցման մեխանիզմի միջոցով, ուստի ստեղծվելուց հետո այն աշխատելու է ինքնուրույն:

Կուզենայի մատնանշել, որ առաջարկվող ծրագիրը հետաքրքրություն առաջացնելու դեպքում կարող է ներկայացվել առավել մանրամասն՝ գործող մեխանիզմներով հանդերձ և այն բաց է քննարկման և նոր առաջարկների համար:

Արտակ Փամհարյան

«Նարեկ» Հայկական մշակութային միության նախագահ